

# ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ

Հուզումները, անօրինությունը, բռնություններն ու պայթյունը սովորական են Արցախում: Անտվորը առանց պատահարի օրերն են: Առավոտյան ինչքան էլ վաղ արթնանաս՝ խանութների դեմ կծկված մարդկանց խմբեր կտեսնես: Գիշերվա ժամը երկուսից հերթի են կանգնում հացի եւ մսկական շիշ սերուցքի ու մածուցի համար: «Դրսից» եկած հյուրը կշփոթվի այդ պատկերից՝ կարծելով, թե պարետային ժամին ինչ-որ արտառոց բան է կատարվում: Բայց զինվորներն էլ են ընտելացել դրան եւ խմբերին չեն ծեծում, քանզի նրանցից բան չկա խլելու (չնայած երբեմն խանութից հաց մտրացող այդ «սպահա-

սպանությունները եւ դատաբժշկական փորձաքննության՝ բզկտված դիակների նկարները:

Երբ մարտի սկզբին դասդասում էինք այդ նկարներից մի քանիսը եւ ողջ փետրվար ամսի 28 օրյա իրադարձությունների քթացնող պատկերը, արդեն աշխատանքային օրն ավարտվել էր: Անհանգստությանը մտածում էինք տուն հասնել, երբ աշխատասենյակից խորհրդավոր ձեռով ինձ դուրս կանչեցին: Միջանցքում ընդառաջ եկան մի քանի երիտասարդներ՝ հոգնատանջ ու անաչկրտ տեսքով: «Հայաստանցիներ» էին, թվով յոթը հոգի՝ մագմիրուքի մեջ կորած, ծանր հագուստներով: Նոր էին նր-

ու ճարմակ հացի պատառները՝ ծիծաղով հիշելու Շուշի բանտի «քարեկեցությունը»...

Համարյա ամեն իրիկուն հանգում են լույսերը: Եւ աշխատանքային օրը չավարտված՝ շտապում ես տուն՝ զգուշանալով, որ մութի ետեւում՝ ամեն բան կարող է կատարվել՝ հատկապես որ ՕՄՈՆի զինված ազերիներն ամենուր են եւ Ադրբեջանի ու խորհրդային երկրի կանաչ-կարմիր դրոշմերը դեռ ծածանվում են մարզկոմի շենքի վրա ու շարժվում նույնիսկ փոքրիկ հարեւանիս զարմանքը, որ «Լեհին պապին կանգնել է թուրքի դրոշի տակ»...

Ամեն գիշեր Արցախը բնում է ականջը



պանները» պարետային ժամին սկսվելուն պես փութաշանորեն ու հարբած խմբերով սողուկում են բոլոր փողոցները եւ անաքելում, թալանում անցորդներին... Ուրիշ մի բան է խորհրդային, այն էլ քաղցած ու զինված բանակը):

Ամեն առավոտ ստեփանակերտցու ալկանջը Երևանից եկող ինքնաթիռի ծայնին է եւ ամեն իրիկուն գիտի, թե օրը քանի թռիչք եղավ կամ արգելվեց «անբարենր-պատտ նղանակի պատճառով»:

Ամեն առավոտ հուլովվում են օրվա լուրերը եւ մտազգում ու հին թվում շարք առաջ եղածները:

Ամեն ինչ թվում է սովորական, նույնիսկ

բանց բաց թողել Շուշիի բանտից, ուր կալանված էին փետրվարի 17-ից եւ զընալու տեղ չունեին: Թույլատրություն էին խնդրում, որ գիշերեն ցուրտ աշխատասենյակի 5-6 աթոռների վրա...

Արագ ու գաղտնի՝ տղաներին երեք խմբի բաժանեցինք եւ ուղարկեցինք հյուրընկալ արցախցիների տները, որպեսզի անձնագրային ռեժիմի ու շուրջկալի մեջ չընկնեն «մեծ» խմբի պատճառով:

Իսկ ճաշարանի մատուցողուհին՝ հեծկըլտում էր, որ դափ-դատարկ ճաշարանում հյուրասիրելու բան չունեիր, որ տղաներն արցախցի չեն եւ հենց բակում կարտավ կուլ են տվել ձեռքներն ընկած միակ տաք

պայթյունի ու կրակոցի: Եւ երբեմն լարված ուղեղը տախտակին խփվող մուրճի ծայնն ու ավտոմեքենայի պայթյունն էլ ընդունվում է որպես ավտոմատի կրակահերթ եւ պրկում մկանները՝ կանանց շուրթերից աննժք ու նախատինքի կեծկրակ պոկելով ՕՄՈՆի ու Գորբաչովի հասցեին: Արցախցին սկսել է ծաղրել պրեզիդենտի եւ Ելցինի վեճը եւ ասում է. «Որ ինքը մի Ելցինի հետ լեզու չի գտնում, բա մենք այդքան թուրքի հետ ի՞նչ լեզու գտնենք»...

Ամեն օր ավելի է սեղմվում Արցախը, բայց ոչ թե կիտրոնի պես, որի հյութերը քամվում են, այլ բռունցքի ու զսպանակի նման...